ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԻՎ/07/21

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ՎԱՐՈՒՅԹԸ ՎԵՐՍԿՍԵԼՈՒ ԵՎ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան 09 օգոստոսի 2021թ.

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, նախագահությամբ՝ Հ.Հարությունյանի և մասնակցությամբ՝ Ն.Համբարձումյանի և Լ.Ալեքսանյանի, (այսուհետ՝ Հանձնաժողով), ուսումնասիրելով ՀՀ Ազգային ժողովի յոթերորդ գումարման պատգամավոր Հայկ Զարեհի Սարգսյանի նկատմամբ 2021 թվականի փետրվարի 18-ին հարուցված թիվ **ՎԻՎ/07/21** հարուցված վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի նյութերը,

ՊԱՐԶԵՑ

I. <u>Վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի նախապատմությունը</u>

1.1. 2020 թվականի հուլիսի 31-ին մի շարք լրատվամիջոցների, այդ թվում՝ «Հետաքննող լրագրողներ» հասարակական կազմակերպության hetq.am կայքում կատարվել են հրապարակումներ՝ ԱԺ պատգամավոր Հայկ Սարգսյանի՝ Սևանա լճի «Սպիտակ Շորժա» հանգստյան գոտու հետ առնչություն ունենալու վերաբերյալ:

1.2. 2020 թվականի օգոստոսի 12-ին՝ հայտարարագրում առկա տվյալների ստուգման արձանագրությամբ, հիմք ընդունելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 25-րդ հոդվածի 1-ին

մասի 5-րդ կետը, Հանձնաժողովը որոշել է իրականացնել Հայկ Սարգսյանի կողմից 2018 թվականի մայիսի 29-ին ներկայացված «Հայտարարատու պաշտոնատար անձի պաշտոնական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու օրվա դրությամբ առկա գույքի, եկամուտների և փոխկապակցված անձանց» հայտարարագրի, 2019 թվականի մայիսի 22-ին ներկայացված «Հայտարարատու պաշտոնատար անձի 2018 թվականի գույքի, եկամուտների և փոխկապակցված անձանց» հայտարարագրի և 2020 թվականի մայիսի 27-ին ներկայացված «Հայտարարատու պաշտոնատար անձի 2019 թվականի գույքի, եկամուտների և շահերի» հայտարարագրի համալիր վերլուծություն:

1.3. 2020 թվականի նոյեմբերի 17-ի գրությամբ Հայկ Սարգսյանը ներկայացրել է հայտարարագրերի վերլուծությամբ արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ իր պարզաբանումները, ինչպես նաև բանկային հաշիվների քաղվածքները:

1.4. 2021 թվականի փետրվարի 18-ին Հանձնաժողովը Հայկ Սարգսյանի մասնակցությամբ կազմվել է վարչական *իրավախախտում* կատարելու վերաբերյալ արձանագրություն:

1.5. 2021 թվականի փետրվարի 18-ին Հանձնաժողովը որոշում է կայացրել «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 3-ին և 5-րդ մասերով նախատեսված առերևույթ իրավախախտումներ կատարելու հատկանիշներով թիվ ՎԻՎ/07/21 վարույթը հարուցելու մասին:

II. <u>Հայտնաբերված անհամապատասխանությունները և դրանց վերաբերյալ Հայկ Սարգսյանի պարզաբանումները</u>

2.1. «Հայտարարատու պաշտոնատար անձի 2018 թվականի գույքի, եկամուտների և փոխկապակցված անձանց» հայտարարագրի վերլուծության արդյունքում արձանագրվել են հետևյալ անհամապատասխանությունները.

1) <u>Հայտարարագրի «հայտարարատու պաշտոնատար անձի դրամական միջոցները» ենթաբաժնի «գումարի չափը հարկային տարվա վերջում» ենթադաշտում չի ներկայացվել հավելյալ 3,542,816 ՀՀ դրամի և 0.24 բիթքոին կրիպտոարժույթի առկայության վերաբերյալ տվյալները:</u>

Համաձայն հայտարարատուի պարզաբանման՝ 2018 թվականի տարեկան հայտարարագրում անկանխիկ 3.542.816 ՀՀ դրամը և 0.24 բիթքոյին կրիպտոարժույթը չի հայտարարագրել, քանի որ հայտարարագրի այդ տարվա

ձևաթուղթը նման տվյալների լրացման համար առանձնացված դաշտեր չի ունեցել: 2019 թվականի հայտարարագրի ձևաթուղթն ունեցել է նման պահանջ ուստի ըստ պահանջի լրացրել է տվյալները:

2) Հայտարարագրի «հայտարարատու պաշտոնատար անձի եկամուտները հարկային տարում» ենթաբաժնում ներկայացված՝ «Հայկ Սարգսյան ԱՁ»-ից ստացված 17,220,000.00 ՀՀ դրամ եկամուտը չի հիմնավորվել ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվությամբ:

Համաձայն հայտարարատուի պարզաբանման՝ մինչև 2018 թվականի մայիսի 29-ը վերջինս զբաղվել է ձեռնարկատիրական գործունեությամբ: 2018 թվականի մայիսի 29-ի դրությամբ ունեցել է 3,723,340 ՀՀ դրամ եկամուտ և այն ներկայացրել է պաշտոնի ստանձնման հայտարարագրում: Դրանից հետո, սահմանված ժամկետում դիմում է ներկայացրել Պետական եկամուտների կոմիտե և դադարեցրել իր անվամբ գրանցված Անհատ Ձեռնարկատիրոջ (այսուհետ՝ ԱՁ) գործունեությունը: Այդ ընթացքում համաձայն կնքված 2 վարկային պայմանագրերի՝ ԱՁ-ն ստացել է 16,000,000 ՀՀ դրամ, որը հայտարարատուն դիտել է որպես ձեռնարկատիրական գործունեության եկամուտ: Նշված գումարներով է ձևավորվել իր հայտարարագրած 17,220,000 ՀՀ դրամ ձեռնարկատիրական եկամուտը:

2.2. «Հայտարարատու պաշտոնատար անձի 2019 թվականի գույքի, եկամուտների և շահերի» հայտարարագրի վերլուծության արդյունքում արձանագրվել են հետևյալ անհամապատասխանությունները.

1) *Հայտարարագրի «Բ1.2-տվյալ տարվա ընթացքում ձեռք բերված և օտարված անշարժ գույքը» ենթաբաժնում ներկայացվել է Երևան քաղաքի՝ 2019 թվականի հունիսի 27-ին նվիրատվության եղանակով ձեռք բերման վերաբերյալ առերևույթ սխալ տվյալներ, մինչդեռ նշված անշարժ գույքի նկատմամբ հայտարարատուի սեփականության իրավունքը գրանցվել է դեռևս 2017 թվականի նոյեմբերի 23-ին:*

Համաձայն հայտարարատուի պարզաբանման՝ նվիրատվության պայմանագրի հիման վրա հիշյալ անշարժ գույքի նկատմամբ իր սեփականության իրավունքը ծագել է 2017 թվականի նոյեմբերի 20-ին և պետական գրամցում ստացել նոյեմբերի 23-ին: 2018 թվականի պաշտոնի ստանձնման հայտարարագրում ներկայացրել է անշարժ գույքի նկատմամբ իր սեփականության իրավունքի վերաբերյալ տվյալը: 2019 թվականին տարեկան հայտարարագիրը լրացնելիս կրկին ուսումնասիրել է նշված տան սեփականության իրավունքի վկայականը և նկատելով, որ դրա գլխագրում նշված է եղել 2019 թվականի հունիսի 27 ամսաթիվը, հայտարարագրում սխալմամբ արձանագրել է, թե գույքը նվիրատվության պայմանագրի հիման վրա ձեռք է բերել 2019 թվականին: Իրականում նշված տունը

նվիրատվությամբ ստացել է հորեղբորից դեռևս 2017 թվականին, երբ ինքը որևէ պաշտոն չի զբաղեցրել:

2) *Հայտարարագրի «Բ.6.3-Կանխիկ դրամ» ենթաբաժնի «Տվյալ տարվա սկզբում առկա դրամական միջոց» ենթադաշտում ներկայացված 16,000,000 ՀՀ դրամ և 60,000 ԱՄՆ դոլար գումարը, չի հիմնավորվում 2013-2020 թվականների ընթացքում ստացված աշխատավարձի մեծությամբ:*

Համաձայն հայտարարատուի պարզաբանման՝ 2019 թվականի տարեկան հայտարարագրում արձանագրված կանխիկ 16,000,000 ՀՀ դրամի և 60,000 ԱՄՆ դոլարի ծագման աղբյուրը նշվել է «աշխատավարձ», քանի որ դրանք գոյացել են 2018 թվականին հայտարարագրված 12,000,000 ՀՀ դրամ և 50,000 ԱՄՆ դոլար դրամական միջոցներին 2018 թվականին ընթացքում ստացած աշխատավարձի խնայողությամբ և ավելացմամբ:

2.3. *«Հայտարարատու պաշտոնատար անձի պաշտոնական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու օրվա դրությամբ առկա գույքի, եկամուտների և փոխկապակցված անձանց» հայտարարագրի և «հայտարարատու պաշտոնատար անձի 2018 թվականի գույքի, եկամուտների և փոխկապակցված անձանց» հայտարարագրի համադրությամբ արձանագրվել է դրամական միջոցների և ծախսերի անհամապատասխանություն:*

Համաձայն հայտարարատուի պարզաբանման՝ հայտարարագրում արտացոլված բիթքոյին կրիպտոարժույթը չի գնել, այլ արտադրել է համապատասխան սարքավորումներով 2017-2018 թվականներին: 2018 թվականի պաշտոնի ստանձնման և տարեկան հայտարարագրերում արտացոլված դրամական միջոցների միջև առկա անհամապատասխանությունների առնչությամբ հայտնել է, որ դա տեղի է ունեցել իր կողմից թույլ տրված վրիպակի պատճառով: 2018 թվականի տարեկան հայտարարագրում որպես տարեսկզբի դրամական մնացորդ նշել է 50,000 ԱՄՆ դոլար, ինչը պետք է գրվեր նաև պաշտոնը ստանձնելու հայտարարագրում, սակայն վրիպել է և հայտարարագրել 5,000 ԱՄՆ դոլար: Նշված վրիպակը շտկելու դեպքում հաշվարկված բացասական տարբերությունը վերանում է:

2.4. *Հայտարարագրերի համալիր վերլուծությամբ 2019 թվականի տարեկան հայտարարագրում արձանագրվել է ընթացիկ տարեկան ծախսերի 7,5 մլն ՀՀ դրամ բացասական մեծություն:*

Հայկ Սարգսյանը պարզաբանել է, որ 2019 թվականի տարեկան հայտարարագրում նշած Lexus մակնիշի ավտոմեքենայի ձեռքբերման բոլոր ծախսերը կատարել է հոր՝ Զարեհ Սարգսյանի կողմից նվիրատվությամբ տրամադրված 19,800 ԱՄՆ դոլար գումարով: Այս տվյալները տարեկան հայտարարագրում չի արտացոլել անզգուշության և հորից համապատասխան

փաստաթուղթ չվերցնելու պատճառով: Դրամական միջոցների բացասական տարբերությունը կապված է այդ հանգամանքի հետ:

Հաշվի առնելով, որ արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ Հայկ Սարգսյանի ներկայացրած պարզաբանումները չեն փարատել Հանձնաժողովի կասկածն առ այն, որ գույքի էական փոփոխությունը ողջամտորեն չի հիմնավորվել օրինական եկամուտներով, ուստի Հայկ Սարգսյանին առաջարկվել է լրացուցիչ պարզաբանումներ ներկայացնել հետևյալ հարցերի վերաբերյալ և ներկայացնել իր փաստարկները հիմնավորող նյութեր, մասնավորապես՝

1) Համաձայն 2021 թվականի փետրվարի 18-ին Հայկ Սարգսյանի կողմից տրված բանավոր բացատրության, ինչպես նաև ներկայացրած վարկային պայմանագրերի Հայկ Սարգսյան Ա/Ձ և միջև 2018 թվականի մարտի 15-ին և 2018 թվականի հունիսի 6-ին կնքվել են վարկային պայմանագրեր: Հանձնաժողովը պահանջել է ներկայացնել Հայկ Սարգսյան Ա/Ձ-ի բանկային հաշվի քաղվածքը 2018 թվականի մարտի 1-ից մինչև 2018 թվականի հունիսի 30-ը ներառյալ, ինչպես նաև ապացույցներ առ այն, որ 2018 թվականի հունիսի 06-ից մինչև վարկի մարման ամսաթիվը՝ 2019 թվականի հունիսի 14-ը վարկի մարումներն իրականացվել են երրորդ անձի կողմից (բանկային հաշվի քաղվածք կամ վարկի մարման անդորրագրեր):

Հայկ Սարգսյանը հայտնել է, որ ձեռքի տակ չունի բանկային հաշվի քաղվածքներ և վարկի մարման անդորրագրեր, սակայն բանավոր հայտնել է, որ մարումներն իրականացվել են մոր՝ միջոցներով:

2) «Հայտարարատու պաշտոնատար անձի 2018 թվականի գույքի, եկամուտների և փոխկապակցված անձանց» հայտարարագրում ներկայացվել է «Ա/Ձ Հայկ Սարգսյան»-ից ստացված 17,220,000 ՀՀ դրամ եկամուտ, որը, սակայն չի հիմնավորվել Հանձնաժողովի կողմից ստացված փաստական հանգամանքներով, ուստի առաջարկվել է պարզաբանել, թե նշված գումարն ինչ կոնկրետ բաղադրիչներից է ձևավորվել, ինչպես նաև տրամադրել 2018 թվականի ընթացքում «Ա/Ձ Հայկ Սարգսյան»-ից ստացված զուտ եկամտի վերաբերյալ տեղեկություն և փաստարկները հիմնավորող փաստաթղթեր:

Հայկ Սարգսյանը հայտնել է, որ 2021 թվականի փետրվարի 18-ին վարչական իրավախախտում արձանագրություն կազմելու ժամանակ տեղի ունեցած նիստի ընթացքում ներկայացրել է, որ այդ գումարը ձևավորվել է ձեռնարկատիրական գործունեության ընթացքում ստացած շահույթից և դրա շրջանակներում ստացած վարկային միջոցներից: Ներկայացրել է վարկային պայմանագրերը և հավելել, որ այդ վարկերից մեկի գումարի մի մասով փակել է նախորդ վարկի մի մասը: Հանձնաժողովի անդամների մոտ ծագել են հարցեր, որ եթե այդ վարկերից մեկը փակել է նախորդը, ապա հայտարարատուի եկամուտներն աճել են 8 միլիոն

դրամով, այլ ոչ թե 16 միլիոն դրամով: Հայտարարատուն խոստացել է լրացուցիչ պարզաբանել գրավոր և հայտնել է, որ 2-րդ վարկից 3 միլիոն դրամի չափով գումարը ծախսվել է նախորդ վարկի մարման, իսկ մյուս մասը պայմանագրով նախատեսված շրջանառու միջոցներ ձեռք բերելու նպատակով:

3) 2018 թվականի օգոստոսի 1-ին ներկայացված «Հայտարարատու պաշտոնատար անձի պաշտոնեական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու օրվա դրությամբ առկա գույքի, եկամուտների և փոխկապակցված անձանց» հայտարարագրում պաշտոնեական պարտականությունները ստանձնելու օրվա դրությամբ ներկայացվել են առկա դրամական միջոցներ 7,000,000 ՀՀ դրամ և 50,000 ԱՄՆ դոլար չափով, որոնք համաձայն 2018 թվականի «Հայտարարատու պաշտոնատար անձի գույքի, եկամուտների և փոխկապակցված անձանց» տարեկան հայտարարագրի 2018 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել են 16,000,000 ՀՀ դրամ և 60,000 ԱՄՆ դոլար: Հիմնավորվել է նաև, որ 2018 թվականի դեկտեմբերի 31-ին Հայկ Սարգսյանի բանկային հաշիվներին առկա է եղել 3,542,816 ՀՀ դրամ դրամական միջոց, որը սակայն չի հայտարարագրվել: Այսպիսով, Հայկ Սարգսյանի դրամական միջոցների աճը 2018 թվականի մայիսի 29-ից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 31-ը կազմել 12,542,816 ՀՀ դրամ (16,000,000-7,000,000+3,542,816) և 10,000 ԱՄՆ դոլար (60,000-50,000), ուստի առաջարկվել է պարզաբանել, թե 2018 թվականի մայիսի 29-ից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում ինչպես են գոյացել նշված գումարները:

Հայկ Սարգսյանը հայտնել է, որ խնդիրը կապված էր տարեվերջի անկանխիկ մնացորդ 3.542.816 դրամը նշված չլինելու հետ: 2018 թվականի մայիսի 29-ից հետո՝ մեկ ամսվա ընթացքում կասեցրել է ձեռնարկատիրական գործունեությունը, կատարել է վերջնահաշվարկ, մարել է դեբիտորական և կրեդիտորական պարտքերը, ինչի արդյունքում գոյացել են ֆինանսական միջոցները:

4) 2018 թվականի «Հայտարարատու պաշտոնատար անձի գույքի, եկամուտների և փոխկապակցված անձանց» տարեկան հայտարարագրում տարվա սկզբի դրությամբ Հայկ Սարգսյանի կողմից հայտարարագրվել են առկա դրամական միջոցներ 50,000 ԱՄՆ դոլարի չափով, ուստի Հանձնաժողովի կողմից առաջարկվել է պարզաբանել այդ գումարի առաջնային ծագման աղբյուրը, ինչպես նաև տրամադրել փաստարկները հիմնավորող փաստաթղթեր:

Հայկ Սարգսյանը պարզաբանել է, որ մինչև 2018 թվականը չի զբաղեցրել որևէ պետական պաշտոն, զբաղվել է ձեռնարկատիրական գործունեությամբ: Իրեն ֆինանսական աջակցություն են ցուցաբերել ծնողները, եղբայրը և քույրերը: Ամենամսյա ֆինանսական միջոցներ է ստացել հոր կողմից՝ բիզնեսում և անձնական կյանքում ունեցած խնդիրները լուծելու նպատակով: Տարիների ընթացքում

վաստակած, ինչպես նաև ծնողների և այլ ազգականների կողմից իրեն տրամադրված ֆինանսական միջոցների խնայողություններից էլ ձևավորվել է 2018 թվականի տարեկան հայտարարագրում նշված գումարը:

III. Որոշումն ընդունելու փաստական և իրավական հիմքերը, պատճառաբանությունը

3.1 Հայկ Զարեհի Սարգսյանը 2018 թվականի մայիսի 29-ին ստանձնել է ՀՀ պետական վերահսկողական ծառայության ղեկավարի տեղակալի պաշտոնը, իսկ 2018 թվականի դեկտեմբերի 09-ին ընտրվել է ՀՀ ազգային ժողովի 7-րդ գումարման պատգամավոր:

3.2 Հայկ Սարգսյանը «Հանրային ծառայության մասին» 2011 թվականի մայիսի 26-ի ՀՕ-172-Ն օրենքի 32-րդ հոդվածի ուժով («Հանրային ծառայության մասին» 2018 թվականի մարտի 23-ի ՀՕ-206-Ն օրենքի 34-րդ հոդվածով) հանդիսանում է հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձ:

3.3 2018 թվականի մայիսի 29-ին Հայկ Սարգսյանի կողմից ներկայացվել «Հայտարարատու պաշտոնատար անձի պաշտոնական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու օրվա դրությամբ առկա գույքի, եկամուտների և փոխկապակցված անձանց» հայտարարագիրը, 2019 թվականի մայիսի 22-ին՝ «Հայտարարատու պաշտոնատար անձի 2018 թվականի գույքի, եկամուտների և փոխկապակցված անձանց» հայտարարագիրը, իսկ 2020 թվականի մայիսի 27-ին Հայտարարատու պաշտոնատար անձի 2019 թվականի գույքի, եկամուտների և շահերի» հայտարարագիրը:

3.4 2018 թվականի մայիսի 29-ին ներկայացված «Հայտարարատու պաշտոնատար անձի պաշտոնական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու օրվա դրությամբ առկա գույքի, եկամուտների և փոխկապակցված անձանց» հայտարարագրում ներկայացվել է սխալ կամ ոչ ամբողջական տվյալ: Հայտարարագրի «Հայտարարատու պաշտոնատար անձի դրամական միջոցները՝ պաշտոնը ստանձնելու օրվա դրությամբ» բաժնում ներկայացվել է 5,000 ԱՄՆ դոլար գումարի առկայության վերաբերյալ սխալ տվյալը: Գումարի չափը ըստ հայտարարատուի պարզաբանման՝ կազմել է 50,000 ԱՄՆ դոլար:

3.5 «Հայտարարատու պաշտոնատար անձի 2018 թվականի գույքի, եկամուտների և փոխկապակցված անձանց» հայտարարագրում ներկայացվել է սխալ կամ ոչ ամբողջական տվյալ: Հայտարարագրի «Հայտարարատու պաշտոնատար անձի դրամական միջոցները» բաժնի «գումարի չափը հարկային տարվա վերջում» ենթադաշտում ներկայացվել է 16,000,000 ՀՀ դրամ գումարի

առկայության վերաբերյալ սխալ տվյալ: Չի ներկայացվել հավելյալ 3,542,816 ՀՀ դրամ գումարի առկայության վերաբերյալ տվյալը:

3.6 «Հայտարարատու պաշտոնատար անձի 2018 թվականի գույքի, եկամուտների և փոխկապակցված անձանց» հայտարարագրում ներկայացվել է սխալ կամ ոչ ամբողջական տվյալ: Հայտարարագրի «Հայտարարատու պաշտոնատար անձի եկամուտները հարկային տարում» բաժնում ներկայացված՝ «Հայկ Սարգսյան ԱՁ»-ից ստացված 17,220,000.00 ՀՀ դրամ եկամուտի վերաբերյալ տվյալը չի հիմնավորվել Հանձնաժողովի կողմից ստացված փաստական հանգամանքներով և հայտարարատուի կողմից ներկայացված պարզաբանումներով:

3.7 «Հայտարարատու պաշտոնատար անձի 2019 թվականի գույքի, եկամուտների և շահերի» հայտարարագրում «Բ.1.2-Տվյալ տարվա ընթացքում ձեռք բերված և օտարված անշարժ գույքը» ենթաբաժնի՝ Երևան քաղաքի գտնվող անշարժ գույքի՝ 2019 թվականի հունիսի 27-ին նվիրատվության եղանակով ձեռք բերման վերաբերյալ տվյալը ներկայացվել է հայտարարագրի լրացման նկատմամբ ներկայացվող պահանջների խախտմամբ: Նշված անշարժ գույքի նկատմամբ հայտարարատուի սեփականության իրավունքը գրանցվել է 2017 թվականի նոյեմբերի 23-ին, իսկ հայտարարատուի կողմից նշված անշարժ գույքի սեփականության վերաբերյալ տվյալը արդեն իսկ ներկայացված է եղել 2018 թվականի մայիսի 29-ին ներկայացված «Հայտարարատու պաշտոնատար անձի պաշտոնական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու օրվա դրությամբ առկա գույքի, եկամուտների և փոխկապակցված անձանց» հայտարարագրում:

3.8 «Հայտարարատու պաշտոնատար անձի 2019 թվականի գույքի, եկամուտների և շահերի» հայտարարագրի «Գ.1-հայտարարտու պաշտոնատար անձի, նրա ընտանիքի անչափահաս անդամների և խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձանց եկամուտները» ենթաբաժնում ներկայացվել են սխալ կամ ոչ ամբողջական տվյալներ, մասնավորապես՝

1) Չի ներկայացվել Զարեհ Սարգսյանից 2019 թվականի ընթացքում նվիրատվությամբ ստացված ընդհանուր 19,800 ԱՄՆ դոլար գումարի վերաբերյալ տվյալը:

2) Չի ներկայացվել 2019 թվականի փետրվարի 13-ին Նաիրի Սարգսյանից բանկային փոխանցմամբ ստացված 2,400,000 ՀՀ դրամ գումարի վերաբերյալ տվյալը:

3.9 Հայկ Սարգսյանը ներկայացրել է պարզաբանում այն մասին, որ, 2018 թվականի եկամուտ դիտարկել և հայտարարագրել է նաև «Հայկ Սարգսյան» ԱՁ-ի միջոցով վարկ ստացած երկուական 8,000,000 ՀՀ դրամ գումարները (ընդհանուր

16,000,000 ՀՀ դրամ), որոնցից առաջին 8,000,000 ՀՀ դրամ գումարը ծախսվել է վարկային պայմանագրից բխող շրջանառու միջոցներ ձեռք բերելու և իր կարիքների համար, իսկ մյուս 8,000,000 ՀՀ դրամից 3,000,000 ՀՀ դրամը օգտագործել է նախորդ 8,000,000 ՀՀ դրամ վարկը մարելու, իսկ մնացած մասը նույնպես շրջանառու միջոցների համալրման համար և հավելել է, որ այդ վարկային պարտավորությունը կատարում է իր մայրը: Նշված փաստերի և դրանց առնչությամբ հայտարարատուի ներկայացրած պարզաբանումների համադրման արդյունքում Հանձնաժողովը ողջամիտ չի դիտարկում այն հանգամանքը, որ հայտարարատուն տիրապետելով 50,000 ԱՄՆ դոլար և 12,000,000 ՀՀ դրամ դրամական միջոցների (համաձայն հայտարարագրի՝ 2018 թվականի հունվարի 01-ի դրությամբ ներկայացված դրամական միջոցներ), 2018 թվականի մայիսի 29-ին զբաղեցնելով ՀՀ պետական վերահսկողական ծառայության ղեկավարի տեղակալի պաշտոնը, դադարեցնելով ձեռնարկատիրական գործունեությունը, 2018 թվականի հունիսի 14-ին որպես վարկային պայմանագրի կողմ «ԱՁ Հայկ Սարգսյան», ընկերության հետ կնքում է 8,000,000 ՀՀ դրամ գումարի վարկային պայմանագիր, ինչից հետո, ըստ վերջինիս պարզաբանման՝ վարկային պարտավորությունների մարումը կատարում է մայրը:

3.10 «Հանրային ծառայության մասին» 2011 թվականի մայիսի 26-ի ՀՕ-172-Ն օրենքի 34-35-րդ հոդվածներով («Հանրային ծառայության մասին» 2018 թվականի մարտի 23-ի ՀՕ-206-Ն օրենքի 40-42-րդ հոդվածներով սահմանված են հայտարարագրի ***բովանդակությանը ներկայացվող պահանջները***:

3.11 «Հանրային ծառայության մասին» 2011 թվականի մայիսի 26-ի ՀՕ-172-Ն օրենքի 35-րդ հոդվածով («Հանրային ծառայության մասին» 2018 թվականի մարտի 23-ի ՀՕ-206-Ն օրենքի 41-րդ հոդվածով, մասնավորապես, սահմանված է, որ ***հայտարարագրման ենթակա են եկամուտները և դրանց ստացման աղբյուրները:*** Նշված իրավադրույթներով սահմանվում են նաև հայտարարագրման ենթակա եկամուտների ցանկը:

3.12 Հանձնաժողովի 2020 թվականի նոյեմբերի 20-ի թիվ 04-Ն որոշման հավելված 2-ով հաստատվել է հայտարարագրի լրացմանը ներկայացվող պահանջները: Մասնավորապես, նշված որոշման հավելված 2-ի 23-րդ կետի համաձայն՝ յուրաքանչյուր տվյալ լրացվում է այդ տվյալին վերաբերելի դաշտում, իսկ հավելյալ տեղեկատվության առկայության պարագայում այն ներառվում է գույքի հայտարարագրի վերջում առկա «Լրացուցիչ տեղեկություններ» դաշտում:

Հանձնաժողովը, գնահատելով վարույթում եղած բոլոր փաստական տվյալները եկել է այն հետևության, որ Հայկ Սարգսյանի կողմից ներկայացված պարզաբանումները ողջամիտ չեն, վերջինիս գույքի էական փոփոխությունը՝ տվյալ դեպքում **2018 թվականի ընթացքում 10,000 ԱՄՆ դոլար և 12,542,816 ՀՀ դրամ**

գումարի աճը ողջամտորեն չի հիմնավորվել օրինական եկամուտներով, ավելին, առկա է ողջամիտ կասկած, որ Հայկ Սարգսյանի հայտարարագրում ներկայացվել են առերևույթ կեղծ տվյալներ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 4-րդ մասով, Հանձնաժողովը 2021 թվականի ապրիլի 12-ին որոշել է **կասեցնել վարչական իրավախախտման վերաբերյալ** թիվ **ՎԻՎ/07/21** վարույթը և նյութերն ուղարկել ՀՀ գլխավոր դատախազություն:

ՀՀ հատուկ քննչական ծառայությունում նախապատրաստված նյութերով 2021 թվականի ապրիլի 30-ին որոշում է կայացվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով քրեական գործ հարուցելը մերժելու մասին: ՀՀ գլխավոր դատախազությունում հիշյալ որոշման օրինականության ստուգման արդյունքում հսկող դատախազի կողմից 2021 թվականի մայիսի 11-ին որոշում է կայացվել քննիչի 30.04.2021 թվականի քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումը վերացնելու և ՀՀ քրեական օրենսգրքի 314.3-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով քրեական գործ հարուցելու մասին:

Դատախազն իր որոշմամբ, մասնավորապես, արձանագրել է, որ Հանձնաժողովը, ուսումնասիրելով Հայկ Սարգսյանի հայտարարագրերը, հայտնաբերել է, որ 2018 թվականի մայիսի 29-ից մինչև նույն թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում նրա դրամական միջոցների՝ **10,000 ԱՄՆ դոլար և 12,542,816 ՀՀ դրամ** գումարի աճի փաստը և առաջարկել է պարզաբանել, թե այդ գումարներն ինչպես են գոյացել: Նման պայմաններում Հանձնաժողովը, որպես մասնագիտացված մարմին, գնահատելով վարույթում առկա բոլոր փաստական տվյալները, հանգել է հետևության, որ Հայկ Սարգսյանի պարզաբանումները ողջամիտ չեն, նրա գույքի էական փոփոխությունները չեն հիմնավորվել օրինական եկամուտներով:

Նախաքննություն կատարելու համար քրեական գործն ուղարկվել է ՀՀ հատուկ քննչական ծառայություն: ՀՀ հատուկ քննչական ծառայության հատկապես կարևոր գործերի ավագ քննիչ որոշմամբ քրեական գործով վարույթը 2021 թվականի հուլիսի 9-ին կարճվել է և որոշում է կայացվել ՀՀ Ազգային Ժողովի պատգամավոր Հայկ Սարգսյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 310.1–րդ և 314.3-րդ հոդվածներով քրեական հետապնդում չիրականացնել՝ արարքում հանցակազմի բացակայության հիմքով: Որոշումը 03.08.2021 թվականին մուտքագրվել է Հանձնաժողով:

Հանձնաժողովը, ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 6-րդ մասով, վերսկսել է կասեցված թիվ ՎԻՎ/07/21 վարույթը:

Քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին 2021 թվականի հուլիսի 9-ի որոշմամբ, Վարույթն իրականացնող մարմինը, մասնավորապես, արձանագրել է, որ գնահատելով նախաքննության ընթացքում ձեռք բերված ապացույցները և հաշվի առնելով, որ ՀՀ Սահմանադրությամբ, քրեական դատավարության օրենսգրքի՝ անմեղության կանխավարկածի սկզբունքի համաձայն՝ հանցանք գործելու մեջ անձի մեղավորության մասին հետևությունը չի կարող հիմնվել ենթադրությունների վրա, այն պետք է հաստատվի գործին վերաբերող փոխկապակցված հավաստի ապացույցների բավարար ամբողջությամբ, սույն քրեական գործի նախաքննության ընթացքում կատարված քննչական և դատավարական գործողություններով ձեռք չեն բերվել ապացույցներ առ այն, որ ՀՀ Ազգային Ժողովի պատգամավոր, հայտարարատու պաշտոնատար անձ Հայկ Սարգսյանի գույքի ավելացումն էականորեն գերազանցում է վերջինիս օրինական եկամուտները և ողջամտորեն չի հիմնավորվում դրանցով: Քրեական գործով ձեռք բերված փաստական տվյալների համաձայն՝ Հայկ Սարգսյանի եկամուտների ավելացումը պայմանավորված է ձեռնարկատիրական գործունեության ընթացքում ստացված վարկային միջոցների, գործունեությունը դադարեցնելու արդյունքում ստացված դրամական միջոցների առկայությամբ: Նշվածով պայմանավորված՝ վարույթն իրականացնող մարմինը հանգել է հետևության, որ Հայկ Սարգսյանի արարքում բացակայում է ՀՀ քրեական օրենսգրքի 310.1–րդ հոդվածով նախատեսված հանցագործության հանցակազմը:

Վարույթն իրականացնող մարմինը հանգել է հետևության նաև առ այն, ՀՀ Հայկ Սարգսյանի արարքում բացակայում է նաև ՀՀ քրեական օրենսգրքի 314.3–րդ հոդվածով նախատեսված հանցագործության հանցակազմը: Այս առումով, Վարույթն իրականացնող մարմինը, մասնավորապես արձանագրել է այն մասին, որ թեև հայտարարագրերում հայտնաբերվել են անհամապատասխանություններ, սակայն, դրանք համադրելով Հայկ Սարգսյանի պարզաբանումների հետ, իր գնահատմամբ քրեական նախաքննության ընթացքում ձեռք չեն բերվել փաստական տվյալներ այն մասին, որ Հայկ Սարգսյանն ուղղակի դիտավորությանբ կեղծ տվյալներ է ներառել 2018-2019 թվականների ընթացքում Հանձնաժողով ներկայացված հայտարարագրերում:

Սույն գործում առկա փաստական հանգամանքների նկատմամբ կիրառելի իրավական նորմերի վերլուծության արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է հետևյալը.

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 247-րդ հոդվածով սահմանված են վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը բացառող հանգամանքները, որի 7-րդ կետով սահմանված կարգավորման

համաձայն՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը չի կարող սկսվել, իսկ սկսվածը ենթակա է կարճման՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության պահին նույն օրենսգրքի 37-րդ հոդվածով նախատեսված ժամկետներն անցնելու դեպքում:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածով սահմանմված են վարչական տույժ նշանակելու ժամկետները, որի 7-րդ մասի համաձայն՝ օրենսգրքի 169.28-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով վարչական տույժը կարող է նշանակվել իրավախախտումը կատարվելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում **(02.05.2020 թվականից** (25.03.2020թ. ՀՕ-206-Ն օրենքի ուժի մեջ մտնելու ամսաթիվը) գործող խմբագրությամբ):

Մինչև 02.05.2020 թվականը գործող խմբագրությամբ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ սույն օրենսգրքի 169.28-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով վարչական տույժը կարող է նշանակվել իրավախախտումը հայտնաբերվելուց հետո՝ երկու ամսվա ընթացքում, սակայն ոչ ուշ, քան իրավախախտումը կատարվելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում:

Վերոնշյալ իրավակարգավորումներից հետևում է, որ ինչպես մինչև 02.05.2020 թվականը գործող խմբագրությամբ, այնպես էլ ներկայումս գործող խմբագրությամբ Օրենսգրքի 37-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված կարգավորումների համաձայն Օրենսգրքի 169.28-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով **վարչական տույժի կիրառումը հնարավոր է** ոչ ուշ քան ***իրավախախտումը կատարվելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում:***

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ սույն գործով քննարկվող խախտումները կատարվել են **2018 թվականի մայիսի 29-ին, 2019 թվականի մայիսի 22-ին և 2020 թվականի մայիսի 27-ին՝** համապատասխանաբար «Հայտարարատու պաշտոնատար անձի պաշտոնական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու օրվա դրությամբ առկա գույքի, եկամուտների և փոխկապակցված անձանց», 2018 և 2019 թվականների տարեկան հայտարարագերի ներկայացման պահին, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 247-րդ հոդվածով սահմանված իրավակարգավորման ուժով սույն գործի քննության վարույթը ենթակա է կարճման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 282-րդ հոդվածի 2-րդ կետով և 283-րդ հոդվածով՝ Հանձնաժողովը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Հայկ Սարգսյանի նկատմամբ 2021 թվականի փետրվարի 18-ին հարուցված թիվ **ՎԻՎ/07/21** վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը կարճել:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հայկ Սարգսյանին այն սահմանված կարգով հանձնելու (հանձնված համարվելու) հաջորդող օրվանից:
3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո Հայկ Սարգսյանին տրամադրել 7 աշխատանքային օր՝ «Հայտարարատու պաշտոնատար անձի պաշտոնական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու օրվա դրությամբ առկա գույքի, եկամուտների և փոխկապակցված անձանց» «Հայտարարատու պաշտոնատար անձի 2018 թվականի գույքի, եկամուտների և փոխկապակցված անձանց» հայտարարագրի, ինչպես նաև «Հայտարարատու պաշտոնատար անձի 2019 թվականի գույքի, եկամուտների և շահերի» հայտարարագրի համապատասխան բաժիններում ուղղում կատարելու համար:
4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **ՀԱՅԿՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**